#ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

ՏԵՂԵԿԱԳԻՐ 4, ՄԱՅԻՍ 2021

Բրյուսովի անվան պետական համալսարան

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Լրագրության բաժնում Փաստերի ստուգման լաբորատորիայի մեկնարկը տրվեց փոխըմբռնման հուշագրի ստորագրմամբ: Համաձայն հուշագրի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն կազմակերպում է լրագրության պրակտիկ լաբորատորիա ԲՊՀ Լրագրության բաժնի ուսանողների համար՝ փաստերի ստուգման և ապատեղեկատվության դեմ պայքարի գործիքների և համապատասխան դասընթացների անցկացման համար:

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆՈՒՄ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎԻԴԵՈԲԼՈԳ

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

ՆԱԽՈՐԴ ՏԵՂԵԿԱԳՐԵՐԸ ՏԵՍ ԱՅՍՏԵՂ

The U.S. Embassy in Armenia
ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ-Հայաստան

Տեղեկագիրը պատրաստվել և հրապարակվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի համատեղ իրականացվող «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակներիի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆՈՒՄ



ԲՊՀ Լրագրության բաժինը 2020թ.-ի սեպտեմբերից ձևավորել է ուսանողների խումբ, որոնք պրակտիկ դասընթացներ կանցնեն, կպատրաստեն ապատեղեկատվության վերաբերյալ լրագրողական նյութեր: Փաստերի ստուգման լաբորատորիայի աշխատանքների մասին հայտարարությունը ուղարկվել է համալսարանի լրագրության ֆակուլտետի ուսանողներին: Բոլոր ցանկացողներն ընդգրկվել են խմբում:

Հանդիպումները տեղի են ունենում հիմանականում առցանց, շաբաթական երկու անգամ՝ մեկ անգամ ամբողջ խմբով (երեքշաբթի), մեկ անգամ անհատական գրաֆիկով յուրաքանչյուր աշակերտի հետ առանձին: Խմբային հանդիպումները տևում են երկուսից երկուսուկես ժամ, անհատականները՝ մեկուկես ժամ:

Դասընթացը վարում է դասախոս, media.am հարթակի խմբագիր Գեղամ Վարդանյանը: Խմբում ընդգրկված է 9 ուսանող: Դասընթացի հիմնական թեմաներն են.

- փաստերի ստուգման տեսությունը, օգտակար ռեսուրսներ
- ինչպես ստուգել լուրերը, խորացված որոնում, արխիվներ ու տվյալների բազաներ
- պատկերների ստուգում՝ տեսություն և գործնական աշխատանք
- տեսանյութի ստուգում՝ տեսություն և գործնական աշխատանք
- գեոլոկացիա՝ տեսություն և գործնական աշխատանք
- ստուգման էթիկական բաղադրիչը

Դասավանդող՝
Գեղամ Վարդանյան

Աշխատող խումբ.

1. Անժելիկա Գյուրջյան, բակալավրիատ, 2-րդ կուրս
2. Էլիզաբեթ Թովմասյան, բակալավրիատ, 2-րդ կուրս
3. Ալինա Հովհաննիսյան, բակալավրիատ, 2-րդ կուրս
4. Ջուլի Հովսեփյան, բակալավրիատ, 2-րդ կուրս
5. Քնարիկ Կնյազյան, մագիստրատուրա, 2-րդ կուրս
6. Հռիփսիմե Հայրապետյան, մագիստրատուրա, 2-րդ կուրս
7. Հռիփսիմե Վարդերեսյան, մագիստրատուրա, 2-րդ կուրս
8. Լիլի Հարությունյան, մագիստրատուրա, 1ին-կուրս
9. Լիանա Հակոբյան, մագիստրատուրա, 1ին-կուրս

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

Հաճախ հարկավոր է ճշտել, թե այս կամ այն էլեկտրոնային փոստը ինչ հետքեր ունի սոցիալական ցանցերում կամ այլ հարթակներում:

Այսպես, «**Email Sherlock**» –ը թույլ է տալիս տեսնել, թե որ հարթակներում է օգտագործվել տվյալ էլեկտրոնային փոստը:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ «ԲՈՒԺՈՒՄԸ». ԱՎԱՆԴԱԿԱՆ ՍԽՏՈՐԻՑ ՄԻՆՉԵՒ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ

Քնարիկ Կնյազյան

Համացանցում չեն դադարում շրջանառվել կորոնավիրուսի բուժման և կանխարգելման մասին կեղծ լուրերը, միֆերն ու մանիպուլիացիաները: Լրատվամիջոցները, օգտատերերը բազմաթիվ տեղեկություններ են տարածում չհաստատված , չստուգված դեղորայքի և դրանց կիրառման մասին: Նման լուրերը լուրջ վտանգ են հանդիսանում հասարակության համար:

Թրամփն առաջիններից էր այս հարցում

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը մարտին իր ֆեյսբուքյան էջում գրել էր մալարիայի դեմ կիրառվող երկու դեղամիջոցի մասին, նշելով, որ դրանք կարող են բուժել կորոնավիրուսը: Թրամփը դեղամիջոցների մասին տեղեկացել էր դեղանյութերի և սննդամթերքի վերահսկման վարչությունից: Սակայն դեղերի արդյունավետությունը ստուգված չէր:



Աշխարհի տարբեր լրատվամիջոցներ գրեցին Թրամփի այս գրառման մասին: Եվ այս ամենից հետո հասարակությունը զերծ չմնաց դառը հետևանքներից . «Գարդիանի» (The Guardian) տեղեկություններով՝ այս հայտարարությունից օրեր անց Արիզոնայում ամուսնական զույգը ընդունել է մալարիայի դեմ ցուցված հիդրոքլորոխին դեղամիջոցը: Տղամարդը մահացել է, իսկ կինը հայտնվել է ծայրահեղ ծանր վիճակում:

Շարունակությունը տես՝ բլոգում

ԿԵՂԾ ԷՋԵՐԸ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ «ՎՍՏԱՀԵԼԻ» ՄԻՋՈՑՆԵՐ

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վերջին տարիներին համացանցում շատ են հանդիպում «հրաշք» միջոցներ տարբեր առողջական խնդիրներից ազատվելու համար: Ավելի հաճախ դրանց գովազդները հանդիպում են ֆիլմեր դիտելիս կամ էլ որևէ լրատվական կայքում (հիմնականում սունկ կայքերում) նյութ կարդալիս: Դրանք մի պահ տարածում գտան նաև ֆեյսբուքում, որտեղ անհայտ ֆեյք էջեր գովազդում էին այդ պրեպարատները:

Գրավիչ վերնագրեր

Այդպիսի գովազդները սովորաբար ունենում են նմանատիպ վերնագրեր. «Այս հրաշք միջոցը կօգնի Ձեզ մեկընդմիշտ ազատվել հոդացավերից», «-20կգ մեկ ամսում՝ առանց դիետաների» և այլն: Այդ գովազդները բացելիս հաճախ տեսնում ենք կայքեր, որոնց հասցեները տարբեր են, բայց կառուցվածքը շատ նման է:

«Հերոսները»

Տարբեր ապրանքների գովազդներում երևում են նույն «գործող անձիք»: Հոդերի Flekosteel կրեմը խորհուրդ տվող բժիշկ-ռևմատոլոգ Արմանը մեկ ուրիշ ապրանքի գովազդային էջում դառնում է օրթոպեդ-վնասվածքաբան Ալեքս:

Մեկ այլ պրեպարատի գովազդում երևում է մի բժշկի նկար, որտեղ, ըստ նկարի ներքևում տեղադրված տեքստի, Կարեն Ամիրխանյանն է՝ բժշկական գիտությունների թեկնածու, էնդոկրինոլոգ:

Հետաքրքիր է նաև մարդկանց մեկնաբանությունների բաժինը, որը վերնագրված է «Ակնարկներ»: Տարբեր ապրանքների մասին մեկնաբանություններում կարելի է հանդիպել նույն նկարներով, սակայն տարբեր անուններով, տարիքով և խնդիրներով մարդկանց: Կայքերում տեղադրված նյութերը կարդալիս բազմաթիվ սխալներից հասկացվում է, որ դրանք թարգմանված են որևէ ավտոմատ թարգմանիչով: Տեքստում երբեմն հանդիպում են անգլերեն կամ ռուսերեն բառեր, որոնք ավտոմատ թարգմանիչը չի կարողացել թարգմանել, կամ էլ թարգմանել է, բայց լրիվ այլ իմաստով: Ստորև ցուցադրված նկարը Hondrostrong-ի մասին է, որը Նարե անունով օգտատերը անվանում է թմրանյութ: Այստեղ տարօրինակ է նաև այն փաստը, որ անվան մոտ տարիքը 28 է նշված, նկարում երիտասարդ աղջիկ է, իսկ մեկնաբանության մեջ նա նշում է, որ 70 տարեկան է:

ՏԱ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

20 Տարի
2001 - 2021
ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Միասին Տեղեկատվության Ազատության Համար

foi@foi.am

+374 91 407836
+374 91 700 974

#ԱՆՎՃԱՐ_ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

տեղեկատվության ազատության ոլորտում

ԴԻՄԵՔ ՄԵԶ, եթե

- չգիտեք՝ ինչպես դիմել տեղեկություն ստանալու համար
- ստացել եք թերի կամ ոչ լիարժեք պատասխան
- խախտվել են տեղեկություն ստանալու ժամկետները
- պետական մարմինները մերժել են տրամադրել պահանջվող տեղեկությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հայաստանի Հանրապետություն,
Երեւան, 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 560 360
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am

#ՎԻԴԵՈԲԼՈԳ

#ՖԵՅՔԱՔԱՂ 4

Սամվել Մարտիրոսյանի և Արթուր Պապյանի հետ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ ՀԿ-ն «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակում մեկնարկել են Ֆեյքաքաղ վիդեոբլոգների շարքը՝ մեդիափորձագետներ Սամվել Մարտիրոսյանի և Արթուր Պապյանի մասնակցությամբ: Նախաձեռնության նպատակն է զարգացնել լրատվամիջոցների մեդիագրագիտությունը և երիտասարդության փաստերի ստուգման հմտությունները:

Ֆեյքաքաղ #4. Խորացված որոնում ենք Google, Yandex, Bing համակարգերով

Հաճելի դիտում:
Կհանդիպենք հաջորդ ամիս

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հայաստանի Հանրապետություն,
Երեւան, 0010, Փ. Բուզանդի 1/3,
4-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 560 360
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ
Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0002, Ղազար Փարպեցու
9բ, 27 ա
Հեռ.՝ +374 95 938363
Էլ. փոստ՝ info@mdi.am
www.mdi.am